

Զենեալ 'ի վերայ քառաթև խաչին՝ անմահ
 Գառն Աստուծոյ բարձող մեղաց մարդկան ,
 Զմարդկայինն առ Հայր աւանդեալ զհոգին ,
 Որով աղաղակելով ելի ելի գոչէր :
 Գոչմամբ զարհուրեալ սանդարամետիցն հոյլք
 Սարսեալ սաքրէին յանդրնդասողք խաւարն ,
 Խաւար լուսածին միջօրեայ եհաս ժամու
 Որով լուծանէր զխաւար մեղաց մահուամբ :
 Մահուամբ անմահին՝ մահուն միռանէր պատճառ ,
 Եւ 'ի մեռելոց յառնէր բնութիւնս անդեալ :
 Անգեալ նախահայրն մահաբեր ծառոյն հրպմամբ ,
 Կանգնէր կենարմատ փայտին մերձեալ 'ի նմա :
 Նման նոյնակի 'ի յօձին հարեալ թունից
 Լուանայր կողածինն տիգախոց կողիւն :
 Կողին գուգնաքեայ շիթք արեան հոսեալ , շնորհեաց
 Յաւէժ միշտ երգել էրրորդութեանն փառս :

ԲՄՈՐՈՅԱԿԱՆ ԻՄԱՍՏՔ

Յոյսն ընդհանուր մարդկութեան միակ բարին է . նոքա որ ոչինչ ունին՝
 անով ունին տակաւին բան մը :
 Խօսից առատութիւնն ոչ է նշանակ մեծագամձ իմաստութեան :
 Մարմնոյ երջանկութիւնն կը կայանայ յառողջութեան , իսկ հոգւոյն՝
 'ի գիտութեան :
 Մարմնոյ արտաքնայարգար պաճուճանք չին կազմեր զճշմարիտն գեղեց-
 կութիւն , այլ հոգւոյն իմաստութեամբք ճոխանայն :
 Կարգաւորեալ Պետութիւն այն է՝ յորում ոչ չափազանց հարուստ և ոչ
 բոլորովին աղքատ քաղաքիք կան :
 Անիրաւ միջոցներով ստացուած մի գիզեր :
 Սեփական թերութիւններն ուղղելու ապահով կերպն է զգուշանալ այն
 բանէն , որուն համար զայս կը յանդիմանի մը :
 Իմաստասիրի մը հարգուցին թէ աշխարհիս մէջ ամենադժուարին , ամենա-
 դիւրին և ամենաքաղցր իրերն ոյք են . Առաջինն , ըսաւ , ինքզինքը ճանչել ,
 երկրորդ՝ խրատել զայս , և երրորդ՝ իւր փափաքելին ընդունել :
 Հարկ է լուծեամբ կնքել խօսքերը , և գլուխինը՝ ժամանակաւ :
 Մի տար բարեկամացք աւելի հաճոյագոյն խորհուրդները , այլ աւելի օգ-
 տակարները :
 Մեծամեծ ձեռնարկներու մէջ անհնար է ամենուն ալ հաճոյ լինել ,
 Թողումք այլոց հարստութիւնքը , և մեք շատանանք առաքինութեամբ :